ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 91 - 92 (16588) ՇԱԲԱԹ, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ

ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՑՈՒՄԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ ԵՐԿՐԻ ՆՈՐԱՑՄԱՆԸ...

## 18-Ի ՓՈԽԱՐԵՆ՝ 14 ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

*Նոյեմբերի 15-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ, անցկացվեց կառավարության նիստ, որին ներկա էին ինչպես նորանշանակ, այնպես էլ՝ արդեն պաշտոններից ազատված նախարարները: Նիստում քննարկեցին գործադիր իշխանության կառուցվածքի փոփոխության ծրագիրը:*



Իսկ նախօրեին Գիորգի Կվիրիկաշվիլին հանդես եկավ հատուկ հրավիրած ճեպ-ասուլիսում, որտեղ ներկայացրեց գործադիր իշխանության կառուցվածքային եւ կադրային փոփոխությունները: Նրա խոսքով, ծրագրված փոփոխությունները ծառայում են պետական ճկուն ապարատի ձեւավորմանը:

- Մեր իշխանության օրոք անցկացված հերթական ժողովրդավարական ընտրությունները, մեր հանդեպ բնակչության կողմից ցուցաբերած վստահությունը մեզ տալիս է վերցրած կուրսը անշեղորեն շարունակելու մանդատ: Մենք ծրագրում ենք իրականացնել մի շարք կառուցվածքային փոփոխություններ,- հայտարարեց վարչապետը:

Նրա խոսքով, փոփոխությունների արդյունքում, առանձին նախարարությունները կմիա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ

# «ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ» ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Նոյեմբերի 14-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ «Արեւելյան գործընկերություն» ծրագրի նախաձեռնող՝ Շվեդիայի եւ Լեհաստանի արտաքին գործերի նախարարներ Մարգոտ Վալստրոմի եւ Վիտոլդ Վաշչիկովսկու հետ, ովքեր Վրաստանում էին Եվրամիության անդամ երկրների ԱԳ նախարարների համատեղ այցի շրջանակներում:*



Հանդիպմանը նշվեց, որ առանձնակի նշանակություն է տրվում «Արեւելյան գործընկերության» առաջիկա գագաթաժողովի նախօրեին իրականացված սույն այցին, եւ որ ծրագրի նախաձեռնող երկրները նշանակալի ավանդ են ներդնում Վրաստանի եվրաինտեգրման եւ գործընկերության զարգացման գործընթացում:

Հանդիպմանը մանրամասն խոսվեց Վրաստանի կողմից եվրաինտեգրման ուղղությամբ իրականացվող կոնկրետ քայլերի եւ առաջիկա գագաթաժողովից վրաց հասարակայնության սպասումների մասին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆ Է

*Նոյեմբերի 12-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելլիի հետ, Տեխնոպարկում մասնակցեց Գլոբալ գործարարության շաբաթի բացման հանդիսավոր արարողությանը:*



Խոսելով միջազգային մասշտաբի սույն միջոցառման նշանակության մասին՝ Գիորգի Կվիրիկաշվիլին նշեց, որ ողջ աշխարհում դրան մասնակցում են շուրջ 10 միլիոն գործարար, քաղաքագետ, կրթության ոլորտի փորձագետներ, ովքեր քննարկում են գործարարության եւ նորարարության խրախուսման հնարավորությունները, եւ, ինչպես հավաստիացրեց վարչապետը, երկրի կառավարության գլխավոր առաջնահերթությունը գործարարության եւ նորարարության խրախուսումն է:

Գիորգի Կվիրիկաշվիլին իր երախտագիտությունը հայտնեց ԱՄՆ ղեկավարությանը այս հետաքրքիր միջոցառման ֆինանսավորման համար:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ



Նոյեմբերի 14-ին, աշխատանքային այցով Երեւանում գտնվող Վրաստանի էներգետիկայի փոխնախարար Գիորգի Չիքովանու գլխավորած պատվիրակությունը, հանդիպում ունեցավ Հայաստանի էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարար Աշոտ Մանուկյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին էներգետիկայի ոլորտում երկկողմ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

# ԹԲԻԼԻՍԻԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԻՐ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

*Նոյեմբերի 12-ին Թբիլիսիի նոր քաղաքապետ Կախա Կալաձեն պաշտոնապես ստանձնեց իր պարտականությունները:*

Այդ օրը նա ներկայացրեց իր թիմի անդամներին, ում հետ ծրագրում է իրականացնել նախընտրական խոստումները: Կախա Կալաձեի ներկայացմամբ, քաղաքապետի տեղակալներ են նշանակվել էներգետիկայի նախկին փոխնախարար Իրակլի Խմալաձեն, բնապահպանության նախկին փոխնախարար Մայա Բիթաձեն, Թբիլիսիի նախկին փոխքաղաքապետ Գիգի Նիկոլեիշվիլին, էներգետիկայի նախարարության նախկին աշխատակից Իրակլի Բենդելիանին: Հինգերորդ փոխքաղաքապետի ով լինելը Կախա Կալաձեն կհայտնի մոտ ժամանակներում:

Թբիլիսիի նոր քաղաքապետը ներկայացրեց նաեւ մայրաքաղաքի շրջանների վարչության նախագահների թեկնածությունները: Այսպես. Իսանիում վարչության նախագահի թեկնածու է առաջադրվել **Կախա Լաբուչիձեն**, Սամգորիում՝ **Դավիթ Կերեսելիձեն**, Սաբուրթալոյում՝ **Գայոզ Վասաձեն**, Մթածմին-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

# ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԸ ՁԵՌՆԱՄՈՒԽ ԵՂԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ



Նոյեմբերի 12-ին Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի նորընտիր քաղաքապետեր Յուրիկ Ունանյանն ու Անի Մոսոյանը ձեռնամուխ եղան իրենց պարտականությունների կատարմանը:

Վերոնշյալ երկու մունիցիպալիտետների վարչություններում կայացած միջոցառումների ժամանակ վարչության անդամներին նորընտիր քաղաքապետին ներկայացրին Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը եւ Ախալքալաքիի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Հասմիկ Մառանգոզյանն ու Նինոծմինդայի տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Սեյրան Կյուրեղյանը:

Միջոցառմանը ելույթ ունեցողներն իրականացված աշխատանքի համար շնորհակալություն հայտնեցին Ախալքալաքիի նախկին քաղաքապետ Էդուարդ Աղասարյանին եւ Նինոծմինդայի նախկին քաղաքապետ Գագիկ Կարսլյանին, իսկ Յուրիկ Ունանյանին ու Անի Մոսոյանին մաղթեցին հաջող ու արդյունավետ աշխատանք:

Նորընտիր քաղաքապետեր Յուրիկ Ունանյանին եւ Անի Մոսոյանին համապատասխան վկայականները հանձնեց Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը:

*Նշենք, որ Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մունիցիպալիտետների նորընտիր սակրեբուլոների անդրանիկ նիստը կանցկացվի նոյեմբերի 20-ին: Նիստում պատգամավորները ընտրելու են սակրեբուլոների նախագահներ, փոխնախագահներ:*



ԲԱՐԵՓՈԽՈՒՄ

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՑՈՒՄԸ ԿՀԱՆԳԵՑՆԻ ԵՐԿՐԻ ՆՈՐԱՑՄԱՆԸ...

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վորվեն: Մասնավորապես, էներգետիկայի նախարարությունը կմիավորվի էկոնոմիկայի նախարարությանը: Այդ գերատեսչությանը կմիացվի նաեւ բնապահպանության եւ բնական ռեսուրսների նախարարության բնական ռեսուրսների կառավարման բաղադրիչը: Նախարարությունը կգլխավորի ֆինանսների նախկին նախարար **Դմիտրի Քումսիշվիլին**, ով միաժամանակ կլինի նաեւ առաջին փոխվարչապետն ու կհամակարգի տնտեսական թիմի աշխատանքը:

Էկոնոմիկայի նախկին նախարար **Գիորգի Գախարիան** կզբաղեցնի Վրաստանի ներքին գործերի նախարարի պաշտոնը: Նա միաժամանակ նշանակվում է նաեւ փոխվարչապետ: Վրաստանի ՆԳ նախարար **Գիորգի Մղեբրիշվիլին** կգլխավորի արտակարգ իրավիճակների կառավարման կենտրոնը: Երկրի վարչապետի անմիջական ենթակայության տակ գտնվող այդ կենտրոնը ձեւավորվում է ճգնաժամերի կառավարման խորհրդի եւ արտակարգ իրավիճակների կառավարման գործակալության միավորումից:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունը կգլխավորի Թբիլիսիի պետական համալսարանի պրոռեկտոր **Միխեիլ Չխենկելին**: Այդ գերատեսչության իրավասության ներքո կգտնվի նաեւ երիտասարդության եւ սպորտի չեղարկվող նախարարության երիտասարդության հարցերով բաղադրիչը, իսկ սպորտի բաղադրիչը կներառվի մշակույթի նախարարության իրավասության ներքո, որը կշարունակի գլխավորել **Միխեիլ Գիորգաձեն**:

Խոսելով գործադիր իշխանությունում իրականացվող փոփոխությունների մասին՝ վարչապետը հայտարարեց, որ կառավարության նորացված կազմում ֆինանսների նախարարությունը կգլխավորի «Վրացական երկաթուղու» ղեկավար **Մամուկա Բախտաձեն**:

Նշանակալիորեն ընդլայնվում է արտաքին գործերի նախարարության գործառույթը: Այդ գերատեսչության իրավասության տակ է անցնում եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման պետնախարարության գործառույթը: Ընդլայնված նախարարությունը կշարունակի գլխավորել **Միխեիլ Ջանելիձեն**, ով միաժամանակ կզբաղեցնի նաեւ փոխվարչապետի պաշտոնը:

Իրականացվող կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ձեւավորվող նոր գերատեսչությունը՝ բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունը կգլխավորի գյուղատնտեսության գործող նախարար **Լեւան Դավիթաշվիլին**:

Իրականացվելիք կառուցվածքային փոփոխությունների թվում վարչապետը նշեց արտաքին հետախուզության ծառայության եւ պետանվտանգության ծառայության միավորը մեկ գերատեսչությունում:

Իրենց պաշտոնները պահպանել են արդարադատության նախարար **Թեա Ծուլուկիանին**, փախստականների եւ բռնագաղթված անձանց նախարար **Սոզար Սուբարին**, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար **Դավիթ Սերգեենկոն**, պաշտպանության նախարար **Լեւան Իզորիան**:

- Ցանկանում եմ խորհրդարանին խնդրել, որ պաշտպանի սույն բարեփոխումներն այն հաշվով, որ այդ գործընթացն ավարտվի մինչեւ տարեվերջ: Օրենսդրական ընթացակարգերի ավարտից հետո, կառավարական թիմը պատգամավորների առջեւ հանդես կգա նոր կազմով, վստահության քվեի ստացման համար իր գործունեության ծրագրով,- ընդգծեց վարչապետը:



ԻՐԱՆ

### ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

*Նոյեմբերի 12-ի երեկոյան, Իրանի եւ Իրաքի սահմանում, երկու հզոր ստորգետնյա ցնցում է տեղի ունեցել՝ 7,2 եւ 7,3 մագնիտուդներով, իսկ գիշերվա ընթացքում գրանցվել են մինչեւ 4,9 մագնիտուդով երկու տասնյակից ավելի հետցնցումներ:*

*Իրանի իշխանությունները հայտնել են ավելի քան 500 զոհվածների ու տասը հազարի չափ տուժածների մասին:*

*Իրաքի առողջապահության նախարարությունը հայտնել է յոթ զոհվածի եւ ավելի քան 530 տուժածների մասին:*

ԱՄՆ

### 4,6 ՄԼՐԴ ԴՈԼԱՐ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ «ՀԱԿԱԶԴԵԼՈՒ» ՀԱՄԱՐ

*ԱՄՆ Կոնգրեսում համաձայնեցրել են երկրի 2018 թվականի ֆինանսական տարվա պաշտպանական բյուջեի նախագիծը, որը նախատեսում է 4,6 միլիարդ դոլարի տրամադրում Եվրոպայում Ռուսաստանին «հակազդելու» համար:*

*Մասնավորապես, նախատեսվում է 350 միլիոն դոլարի ռազմական օգնություն հատկացնել Կիեւին: Բացի դրանից, բյուջեի համաձայնեցված նախագիծը նախատեսում է, «ռուսական ագրեսիան» դիմագրավելու համար որպես օգնություն, 100 միլիոն դոլար տրամադրել Լիտվային, Լատվիային եւ Էստոնիային:*

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

### ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ Է ԵՄ-ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՍՏՈՒՅԳ ԺԱՄԱՆԱԿԸ

*Մեծ Բրիտանիայի կառավարությունն օրենսդրորեն կձեւակերպի Եվրամիությունից երկրի դուրս գալու ստույգ ժամանակը: Այս մասին հայտնել է Brexit-ի հարցերի նախարար Դեւիդ Դեւիսին:*

*Եվրամիությունից թագավորությունը դուրս կգա 2019 թվականի մարտի 29-ին, Լոնդոնի ժամանակով ժամը 23:00-ին կամ Կենտրոնական Եվրոպայի ժամանակով՝ 00:00-ին: Այդ ժամկետը հայտնի էր ավելի վաղ. Լոնդոնը պլանավորել էր ԵՄ լքել Brexit-ի գործարկումից ուղիղ երկու տարի անց: Այժմ կառավարությունը որոշել է ուղղում մտցնել օրենսդրության մեջ՝ ստույգ ժամանակի նշմամբ:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

եւ տարածաշրջանային համագործակցությանը վերաբերող հարցեր:

Հանդիպման մասնակիցները, մասնավորապես, անդրադարձան Վրաստան- Հայաստան բարձրավոլտ օդային գծի կառուցման ծրագրին, տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական միջանցքի ձեւավորման ուղղությամբ Վրաստանում եւ Հայաստանում իրականացվող աշխատանքներին:

Ողջունելով հյուրերին՝ Աշոտ Մանուկյանը նշեց, որ Հայաստանը մեծ կարեւորություն է տալիս փոխշահավետ ծրագրերի կենսագործմանը եւ ներկայացրեց կատարվող աշխատանքների ընթացքը:

Վրացական կողմը, իր հերթին, ներկայացրեց տարածաշրջանային էլեկտրաէներգետիկական միջանցքի ձեւավորման ուղղությամբ Վրաստանում կատարվող աշխատանքները:

Զրուցակիցները պատրաստակամություն հայտնեցին շարունակել համագործակցությունը եւ, համատեղ ծրագրերը հաջող կյանքի կոչելու համար, գործադրել առավելագույն ջանքերը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ

***Համաշխարհային տնտեսական գագաթաժողովի գլոբալ մրցունակության մասին ամենամյա հաշվետվության մեջ Վրաստանը, ոստիկանության գործունեության արդյունավետության տեսանկյունից, բավականին առաջընթաց է գրանցել:***

2012 թվականի համեմատությամբ, նոր հաշվետվության մեջ Վրաստանում կազմակերպված հանցագործության ինդեքսը բարելավվել է 37 կետով, եւ երկիրը սանդղակում 75-րդ տեղից հասել է 38-րդին:

Վրաստանը բարելավել է դիրքերը նաեւ իրավախախտման կամ բռնության արդյունքում ֆինանսական կորուստների ինդեքսում: Այդ սանդղակում Վրաստանը, 2012 թվականի 56-րդ տեղի փոխարեն, ներկայիս հաշվետվությունում զբաղեցնում է 30-րդ տեղը:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ

# ԹԲԻԼԻՍԻԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՆ ԱՆՑԿԱՑՐԵՑ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԸ



Նոյեմբերի 14-ին իր անդրանիկ նիստն անցկացրեց Թբիլիսիի վեցերորդ գումարման նորընտիր սակրեբուլոն:

Անդրանիկ նիստում, որը վարեց սակրեբուլոյի ամենատարեց պատգամավոր Փրիդոն Ինջիան, պատգամավորները սակրեբուլոյի նախագահ ընտրեցին «Վրացական երազանքի» ներկայացուցիչ Գիորգի Տղեմալաձեին: Սակրեբուլոյի առաջին փոխնախագահ ընտրվեց Գիորգի Ախվլեդիանին, փոխնախագահներ՝ Մարիկա Դարչիան եւ Դավիթ Ուչմաջուրիձեն:

# ԹԲԻԼԻՍԻԻ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ԻՐ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

դայում՝ **Դավիթ Կիրկիտաձեն**, Կրծանիսիում՝ **Լեւան Ջափարիձեն**, Վակեում՝ **Նոդար Տուրձելաձեն**, Դիդուբեում՝ **Իրմա Զավրադաշվիլին**, Չուղուրեթիում՝ **Զուրաբ Չիկվիլաձեն**, Գլդանիում՝ **Բեքա Միքուտաձեն**, Նաձալադեւիում՝ **Իրակլի Խելաձեն**:

Ներկայացված թեկնածուների ցուցակը հաստատվել է Թբիլիսիի սակրեբուլոյի կողմից:

# ԱՆՑԿԱՑՎԵՑ ՏԵՂԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԸ

## ՎԵՑ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐԻՑ ՀԻՆԳՈՒՄ ՀԱՂԹԵՑԻՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

***Նոյեմբերի 12-ին վեց ընտրատարածքներում՝ Քութայիսի քաղաքում, Ղազբեգիի, Խաշուրիի, Բորժոմիի, Օզուրգեթիի եւ Մարտվելիի մունիցիպալիտետներում, անցկացվեց տեղական ինքնակառավարման ընտրությունների երկրորդ փուլը:***




Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվությամբ, ընտրություններին մասնակցել է ցուցակներում գրանցվածների 33,24 տոկոսը:

Ընտրությունների արդյունքներով, վերոնշյալ վեց ընտրատարածքներից հինգում հաղթել են կառավարող «Վրացական երազանք» կուսակցության թեկնածուները: Այսպես. Քութայիսիի քաղաքապետի ընտրություններին հաղթել է Գիորգի Չիգվարիան, Ղազբեգիում՝ Ալեքսանդր Զագաշվիլին, Խաշուրիում՝ Գիորգի Գուրասպաշվիլին, Բորժոմիում՝ Լեւան Լիպարտիան, Մարտվիլիում՝ Ալեքսանդր Գրիգալավան: Միայն Օզուրգեթիի մունիցիպալիտետում հաղթել է անկախ թեկնածու Կոտե Շարաշենիձեն:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ԳԼԽԱՎՈՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Մեր գլխավոր նպատակը տնտեսության զարգացումն ու գիտելիքի վրա հիմնված նոր ոլորտների հիմնումն է, ուստի, ակտիվորեն իրականացնում ենք չորս կետից կազմված ծրագիր: Այդ ծրագիրը նախատեսում է այնպիսի «սթարթափների» խրախույս, որոնք ուղղված են տարածաշրջաններում երիտասարդների օգնությանը: Վրաստանի նորամուծությունների եւ տեխնոլոգիաների գործակալությունը՝ հանձինս «Արտադրիր Վրաստանում» եւ «Սթարթափ Վրաստան» նախագծերի, հաջողությամբ ներդնում է երկրի կառավարության նորարարության եւ գործարարության խրախուսման ծրագիրը,- ընդգծեց վարչապետը:




Գիորգի Կվիրիկաշվիլին մասնամասն խոսեց նաեւ կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների մասին՝ նշելով, որ հիմնական շեշտը դրվելու է STEM ոլորտի՝ գիտության, տեխնոլոգիայի, ինժեներական, մաթեմատիկայի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա:

Իր հերթին, Վրաստանում ԱՄՆ դեսպան Յան Քելլին երկրի վարչապետին հանձնեց տիեզերական «Voyager» նավով տիեզերքի ուղարկած ոսկե ձայնագրության պատճենը, որը կցուցադրվի Տեխնոպարկում:

Նշենք, որ Գլոբալ գործարարության ամենամյա շաբաթը, որը ներառում է տարբեր միջոցառումներ, անցկացվում են աշխարհի 100 երկրում ու 370 համալսարանում:

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# «ԻՆՏԵՐԿՐՈՆԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ




***Նոյեմբերի 12-ին, Թբիլիսիի «Քորթիարդ Մերիոտ» հյուրանոցում, կրոնական հարցերով պետական գործակալությունը «Կրոնական հանդուրժողականությունը Վրասանում» թեմայով անցկացրեց «Ինտերկրոնական երկխոսություն խաղաղության համար» երկրորդ խորհրդաժողովը:***

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեցին Վրաստանի կրոնական ուղղությունների ղեկավարներ, խորհրդարանի պատգամավորներ եւ կառավարության անդամներ, դիվանագիտական կորպուսի, տարբեր համալսարանների ներկայացուցիչներ:

Խորհրդաժողովի նպատակը հասարակայնությունում հանդուրժողականության մակարդակի բարձրացումն էր: Խորհրդաժողովը բացեց կրոնական հարցերով պետական գործակալության նախագահ Զազա Վաշաղմաձեն: Իր խոսքում, ընդգծելով Վրաստանում բազմադարյան հանդուրժողականության ավանդույթի առկայությունը, նա հանդես եկավ նախաձեռնությամբ, որ վրացական հանդուրժողականության ավանդույթին շնորհվի ոչ նյութական մշակույթի ժառանգության հուշարձանի կարգավիճակ:

Խորհրդաժողովում ելույթ ունեցան մարդու իրավունքների պաշտպանության խորհրդարանական կոմիտեի նախագահ Սոփիո Կիլաձեն, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Վրաստանի մշակութային ժառանգության պաշտպանության ազգային գործակալության գլխավոր տնօրեն Նիկոլոզ Անթիձեն, Վրաստանում Իրանի արտակարգ եւ լիազոր դեսպան Սեյիդ Ջավադ Ղավամշահադին:

Խորհրդաժողովում քննարկվող թեմայի շուրջ իրենց հայացքները ներկայացրին Վրաստանում կրոնական ուղղությունների ներկայացուցիչներ, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Վրաստանի պատրիարքության քարտուղար, ավագ երեց Միքայել Բոտկովլին, ռաբբի Ռախամի Մուրդուխաշվիլին, եզդիների հոգեւոր խորհրդի ներկայացուցիչ Դմիտրի Փիրբարին, Համայն Վրաստանի մահմեդականների վարչության ներկայացուցիչ Ռեւազ Միքելաձեն, լատինական կաթոլիկների Կովկասի առաքելական վարչության եպիսկոպոս Ջուզեպպե Պազոտին, Թբիլիսիի միջազգային բապտիստական եկեղեցու քահանա Չարլզ Հոբլիցը, Վրաստանի ավետարանչական-բողոքական եկեղեցու ավագ վարդապետ Շմագի Ճանկվետաձեն, ավետարանչական-բապտիստական եկեղեցու եպիսկոպոս Մերաբ Գափրինդաշվիլին, Վրաստանի ավետարանչական-քրիստոնեական բապտիստական եկեղեցական միության ղեկավար Գիա Կանդելակին, Կրիշնայի հետեւորդների միջազգային ընկերության խորհրդի հասարակության հետ հարաբերությունների ծառայության պետ Յոսեփ Կապանաձեն:

Խորհրդաժողովի աշխատանքին մասնակցեցին նաեւ Վրաստանի տարբեր տարածաշրջաններում գործող բուհերի պրոֆեսորներ:



## ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ԿԱՆԽԱԳԾՄԱՆ ՏՈԿՈՍԸ

*Եվրոպայի վերակառուցման եւ զարգացման բանկը (EBRD) ավելացրել է 2017 եւ 2018 թվականների համար Վրաստանի տնտեսական աճի կանխագծած ցուցանիշը:*

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունը, բանկի կանխագծումներով, Վրաստանի էկոնոմիկան 2017 եւ 2018 թվականներին կաճի 4,5 տոկոսով: Այդպիսով, ընթացիկ տարվա աճի ցուցանիշն ավելացվել է 0,6, իսկ 2018 թվականի համար՝ 0,3 տոկոսով:*

*Նշենք, որ 2017 թվականի անցած 9 ամիսների ընթացքում Վրաստանում տնտեսական աճը կազմել է 4,7 տոկոս:*

## ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ՝ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

*Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում ավարտին է մոտենում պոմպակայանների վերականգնումը:*

*Նախագծի շրջանակներում, փոխվել է վեց միավոր վահանակ եւ տեղադրվել՝ պոմպի չորս նոր սարքավորում:*

*Վերականգնման աշխատանքների ավարտից հետո, Ախալքալաքիի մունիցիպալիտետի Դիլիսկա, Պրտենա եւ Չունչխա գյուղերի 1384 հեկտար հողատարածքներում կբարելավվի ոռոգման ջրի մատակարարումը:*

*Նախագիծը, որի արժեքը կազմում է 550 հազար լարի, իրականացնում է «Վրաստանի ոռոգում» ՍՊԸ-ն:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(17 նոյեմբերի)

*Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 2.695 | 2.765 |
| ԵՎՐՈ | 3.156 | 3.289 |
| ՌՈՒԲԼԻ | 0.043 | 0.049 |
| ԴՐԱՄ | 0.0042 | 0.0061 |

*Նոյեմբերի 10-ի համեմատ, դոլարի կուրսը ավելացել է 0,075 լարիով:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

# ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ 897 ՓԱՍՏ

Նոյեմբերի 6-12-ին, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի կողմից երկրի մասշտաբով անցկացրած վերահսկիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 897 փաստ: Մասնավորապես, եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի աշխատակիցների կողմից ստուգման է ենթարկվել 3220 փոխադրող, արդյունքում՝ վավերացվել են հարկային հետեւյալ իրավախախտումները. առանց ապրանքագրի ապրանքի փոխադրման՝ 118 փաստ, տնտեսական գործունեության հարկատուի համար Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգի խախտման՝ 60, սպառողներին կանխիկ գումարով հաշիվ-հաշվառման ընթացքում գանձարկղային սարքի չօգտագործման 719 դեպք:

# ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ ՉՀՌՉԱԿԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐ

***Նոյեմբերի 8-ին «Սադախլո- ավտոճանապարհային» մաքսակետում ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա խուզարկեցին Հայաստանի քաղաքացի Կ.Ն.-ին պատկանող ավտոմեքենան:***

Խուզարկության ընթացքում հայտնաբերվել են չհռչակագրված ոսկե զարդարանքներ, ընդհանուր՝ 4,100 կգ քաշով: Ապրանքի մաքսային արժեքը կազմում է 4 264 լարի:

Հարկային օրենսգրքի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 4 264 լարիով:

Նոյեմբերի 14-ին սահմանային վերոնշյալ անցումակետում հայտնաբերվել է երկրի տարածք, ընդհանուր առմամբ, 3540 չհռչակագրված ծխախոտ ներբերելու երկու փաստ:

Մաքսանենգ ապրանքը հայտնաբերվել է Հայաստանի քաղաքացիներ Պ.Մ.-ի եւ Վ.Ա.-ի ֆիզիկական խուզարկության ժամանակ: Իրավախախտում թույլ տրված քաղաքացիները տուգանվել են հազարական լարիով:

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻՆ



Նոյեմբերի 13-ին Ուկրաինայի պետական դրամական ծառայության նախագահ Միրոսլավ Պրոդանը հանդիպում ունեցավ Վրաստանի ֆինանսների առաջին փոխնախարար, եկամուտների ծառայության պետ Գիորգի Թաբուաշվիլու հետ: Հանդիպմանը կողմերը խոսեցին Վրաստանի եւ Ուկրաինայի եկամուտների ծառայությունների միջեւ սերտ համագործակցության, փորձի եւ տեղեկատվության փոխանակման անհրաժեշտության մասին:

***ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ***

ԿՐԹԱԿԱՆ

## ԴԱՍԱԳՐՔԵՐԸ ԿՓՈԽՎԵՆ ԱՌԱՋԻՆԻՑ ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԸ ՆԵՐԱՌՅԱԼ

***2018 թվականից, հանրակրթական դպրոցների 1-ից 6-րդ դասարանը ներառյալ, դասագրքերը կփոխվեն: Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Թեյմուրազ Մուրղուլիան:***



Նրա խոսքով, գրքերի փոփոխման անհրաժեշտությունը ծագեց՝ ելնելով ներկայիս դասագրքերի բարդությունից, թեպետ, թե ի՞նչ փոփոխություններ կարող են կատարվել գրքերի բովանդակության բաժնում, փոխնախարարը չկոնկրետացրեց:

- Թե ինչ փոփոխություններ կլինեն գրքերում, որոշելու են հեղինակները: Ազգային ուսումնական ծրագիրը կսահմանի ուսումնական գործընթացի պահանջները, եւ այդ պահանջները բավականին շատ են: Գիտության ոլորտներում կան փոփոխություններ եւ նորույթներ: Փոփոխություններ կան նաեւ պատմության ոլորտում: Օրինակ, տեղեկատվական եւ հեռուստահաղորդակցության ուղղությունները, վերջին 7 տարիների ընթացքում բացարձակապես այլ ուղղությամբ ընթացան: Ավելացվելու են «Ես եւ հասարակությունը» եւ «Իմ Վրաստանը» դասագրքերը: Գործնականում, բոլոր ուղղություններով կան նորույթներ, որոնք պետք է ավելացվեն գրքերում: Սակայն, խոսքը միայն ավելացումների մասին չէ: Հավանաբար, գիտեք, որ 1-ից 6-րդ դասարաններում ուսումնական մոդելը փոխեցինք: Այդ տարիները չպետք է վերածվեն երեխայի տանջանքի տարիների: Դա պետք է լինում ուսուցում՝ խաղին զուգընթաց, ուստի, որակի նկատմամբ պահանջները արմատապես փոխվել են: Դասագրքերը կլինեն անհամեմատ պարզ: Հիմա բարդ են, խնդիրներն այնքանով են բարդ, որ չեն կարողանում լուծել, երեխաները հետաքրքրությունը կորցնում են: Շատ երեխաներ կորցրել են հետաքրքրությունը մաթեմատիկայի նկատմամբ: Այդ պատճառով, 1-ից 6-րդ դասարանների համար կմշակվի առանձնակի մոտեցում,- հայտարարեց Մուրղուլիան:

Նրա խոսքով, բարձր դասարաններում հակառակ իրավիճակն է:

- Այստեղ իրավասություններն ու հմտությունները պետք է ավելացվեն: Մի բան է՝ իմանալ, թե ե՞րբ է տեղի ունեցել Դիդգորիի ճակատամարտը, եւ այլ բան՝ կարողանալ վերլուծել, ինչը պայմանավորեց Դիդգորիի ճակատամարտը: Այդ պատճառով, մենք ցանկանում ենք երեխաներին հասցնել ոչ միայն փաստը, այլեւ այդ փաստերի վերլուծության հնարավորությունը:

Ինչ վերաբերում է ունակությունների թեստերի արդյունքներին, դա վկայում է, որ գլխավորը փաստերի հիշատակումը չէ, այլ վերլուծության ունակության եւ սինթեզի համատեղումը: Դա այն է, ինչ ցանկանում են ուսուցանել բարձր դասարաններում: Հետեւաբար, նոր գրքերում կլինի ոչ թե տեղեկատվության կուտակում, այլ ունակություններին կողմնորոշված եւ նորացման մոտեցում: Կփոխվեն գնահատման չափորոշիչները,- հայտարարեց Թեյմուրազ Մուրղուլիան:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

## ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ԿՐԹԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարությունն արձագանքեց Եվրահանձնաժողովի հաշվետվությանը եւ նշեց, որ Եվրահանձնաժողովը բարձր է գնահատել գերատեսչությունում տարվող աշխատանքը:***




Ինչպես տեղեկացրին նախարարությունում, Վրաստանի կողմից Եվրամիության հետ ասոցիացման իրականացման մասին Եվրահանձնաժողովի հաշվետվության մեջ դրական գնահատական է տրվել Վրաստանի կրթական համակարգում իրականացված նախագծերին, եւ դրանում ընդգծվել է ինչպես ընդհանուր, այնպես էլ՝ մասնագիտական, բարձրագույն կրթության եւ գիտության զարգացման ուղղությամբ իրականացված քայլերի դրական միտվածությունը:

«Հաշվետվության մեջ դրական է գնահատվել աշխատանքային շուկայի պահանջներին մասնագիտական հանրակրթական ծրագրերի մերձեցումը, ինչը կառավարության չորս կետից կազմված ծրագրի գլխավոր անկյունաքարն է: Գործուն քայլեր են իրականացվում բարձրագույն կրթության զարգացման եւ ինտերնացիոնալիզացման համար, ինչն էլ ընդգծված է հաշվետվությունում: Վրաստանն ակտիվորեն ներգրավված է Եվրամիության ERASMUS+ ծրագրում եւ, 131 գործընկեր երկրների թվում ու նաեւ հաջողակ նախագծերի տեսանկյունից, զբաղեցնում է 8-րդ տեղը: Արդյունքում, 2015 թվականից Եվրոպայի առաջատար համալսարաններում ֆինանսավորվում է ավելի քան 1500 վրաստանցի ուսանողների ուսուցումը: Արտոնություններից օգտվում են նաեւ գիտնականները, վարչակազմերը, դասախոսները, եւ անայցեգրային պայմանակարգը նպաստում է այդ գործընթացին: Հատկանշական է նաեւ այն, որ «Էրսմուսի» շրջանակներում երիտասարդների լիդերության եւ գիտնականների իրավասության զարգացման տեսանկյունից ֆինանսավորված նախագծերի շուրջ 31 տոկոսը բաժին է ընկնում Վրաստանին»,- ասված է նախարարության հաղորդագրության մեջ:

Կրթության նախարարությունը հայտարարեց, որ իշխանությունը մեծ ջանքեր է գործադրում հետազոտությունների, տեխնոլոգիաների եւ նորամուծությունների զարգացման տեսանկյունից, ինչի ապացույցը Եվրամիության հետազոտությունների ու նորամուծությունների խոշորագույն «Հորիզոն 2020» նախագծում Վրաստանի անդամակցությունն է:

«77 միլիարդանոց հիմնադրամում, որին Վրաստանը անդամակցվեց 2016 թվականին, մրցույթի կարգով, վրացական կազմակերպությունների կողմից ներկայացված 17 նախագծերը, ընդհանուր առմամբ, արդեն ֆինանսավորվել են ավելի քան 5,2 միլիոն լարիով: Հատկանշական է, որ, գիտության հետագա զարգացման նպատակով, երկրի կողմից մուծած անդամավճարի կեսը վերադարձվում է, իսկ այդ նորույթը նշանակալիորեն նպաստում է վրաց գիտնականների եւ հետազոտողների հարմոնիկ ինտեգրմանը Եվրոպայի հանրակրթական հարթությունում, ինչը առանձնակի բարձր է գնահատվել Եվրահանձնաժողովի վերջին հաշվետվությունում»,- ասված է Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տարածած հաղորդագրության մեջ:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

## ԼԱՎ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

***«Առաջին դասարանցիների ընծայակոչման արարողություն» միջոցառումը, Թբիլիսիի թիվ 104 այս հայկական դպրոցի ավանդույթներով հարուստ տարեգրության մեջ, սիրով որդեգրվեց:***



Ասենք, որ այս միջոցառումն ունի ընդամենը 4 տարվա կենսագրություն: Դա այն այլեւս անմոռաց օրն է, երբ դպրոցի ամենակրտսեր սաները, հանդիսավոր մթնոլորտում, հյուրերի, ծնողների, ուսուցիչների ու ավագ դասընկերների ներկայությամբ, կրթօջախի տնօրեն Իրինա Ժամկոչյանի կողմից, ստանում են դպրոցի աշակերտ կոչվելու հավաստագիր:

Այդ պատվավոր կոչմանն արժանացան կրթօջախի երկու առաջին դասարանի 32 աշակերտները: Առաջին դասարանցիների նման թվաքանակ կրթօջախը վաղուց չէր ունեցել, ու այդ կարեւոր փաստն առանձնակի ուրախություն հաղորդեց տոնական հանդեսին: Աշակերտական կենսագրության ընդամենը երկու ամսում, նրանք ցանկալի արդյունքի հասել էին կրթօջախի իրենց գործին գիտակ, փորձառու, վաստակաշատ մանկավարժներ Սիլվա Կալոյանի եւ Օքսաննա Շաբոյանի՝ սիրով ու մեծագույն նվիրումով կատարված աշխատանքի շնորհիվ:

Հանդեսին ներկա հյուրերը՝ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու ուսումնական նյութերի փորձագետ Կարինե Մանուկյանը, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը, Կենտրոնի կրթության բաժնի ղեկավար Եւգենյա Մարկոսյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության ռազմական կցորդ Սամվել Ռամազյանը, բարձր գնահատեցին կրթօջախի հայապահպան գործունեությունը: Նրանք իրենց շնորհակալությունը հայտնեցին ծնողներին զավակներին հայեցի կրթություն տալու հայրենանվեր ու ճիշտ որոշման համար, եւ իրենց երախտիքի խոսքը հղեցին երկրի ազգային փոքրամասնություններին նման հնարավորություն ընձեռող Վրաստանի կառավարությանը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

## «Ա» ՏԱՌԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՑ ԴԱՍ-ՀԱՆԴԵՍ

***Տոնական այդ օրն իրենց ողջ կյանքում հիշելու են մայրաքաղաքի թիվ 103 դպրոցի առաջին դասարանցիները:***

Ճաշակով զարդարված դասասենյակներից մեկը, որ համապատասխանում էր օրվա խորհրդին, մարդաշատ էր ուսուցիչներով, ծնողներով, հյուրերով: Նրանք առանձնակի սպասումով եկել էին ներկա գտնվելու առաջին դասարանցիների «Ա» տառի ուսուցմանը նվիրված բաց դաս-միջոցառմանը: Սպիտակ վերնաշապիկներով 9 վեցամյա աշակերտներ իրենց կրծքերին փակցրել էին օրվա խորհրդանիշ տառը:

Հնչեց զանգը: Հմուտ եւ փորձառու դասվար Լուիզա Մուրադյանն սկսեց վարել դասը: Աշակերտները ներկայացրին նախաայբբենական շրջանում ձեռք բերած գիտելիքները՝ պատասխանելով ուսուցչուհու տված հարցերին, արտասանեցին բանաստեղծություններ, երգեցին տարբեր երգեր, մեկնաբանեցին երկրաչափական պատկերների նշանակությունը: Այնուհետեւ ցուցադրեցին հայոց լեզվի, հայերեն տառերի ու Մեսրոպ Մաշտոցի մասին համառոտ կոմպոզիցիա:

...Եվ փոքրիկները «ուղեւորվեցին» անտառ՝ որոնելու «Ա» տառը: Ճանապարհին նրանք հանդիպեցին հեքիաթների տարբեր հերոսների՝ կարմրակատար աքաղաղին, բրդոտ արջին, խորամանկ աղվեսին, արեւին ու արեւածաղկին, որոնց մարմնավորել էին տարրական դասարանների մի խումբ աշակերտներ: Նրանց առաջադրած հանելուկները հաջողությամբ գուշակելուց հետո, գտնվեց օրվա հերոսը: Ուրախ երգերով, բանաստեղծություններով ու պարով աշակերտները տոնեցին «Ա» տառի ծնունդը:

Միջոցառումը գնահատեցին եւ ուսուցչուհու մեծ աշխատանքն ու յուրատեսակ դաս-կոմպոզիցիան կարեւորեցին ուսմասվար Հասմիկ Պապիկյանը եւ տողերիս հեղինակը:



*ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

***Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ***